



(Համառոտ հաղորդումներ (Краткие сообщения) (Short communications))

Հայաստանի կենսաբ. հանդես, 2 (61), 2009

**ԱՐՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ
ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԵՄ ՀԻՊՈԴԵՐՄԱՏՈԶԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՆՈՐ ԵՂԱՆԱԿԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ**

Մ. Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Հայաստանի պետական ագրարային համալսարան

Տավարի հիպոդերմատոզի կանխարգելման նպատակով բոռերի թռիչքի սկզբին, կենդանու պոչի հիմքի մաշկին ամրացվում է տավարի դաբաղած, 18 x 1,8 սմ չափի նեոցիդոլի 60% լուծույթով ներծծված կաշվի կտոր և թողնվում է մինչև բոռերի թռիչքի ավարտը, որը կանխարգելում է սեռահասուն բոռերի ձվադրումը և հորթերի մոտ հիպոդերմատոզի առաջացումը: Մշակման հետևանքով կենդանիների արյան էրիթրոցիտների քանակության և հեմոգլոբինի պարունակության փոփոխություններ չեն նկատվում:

Հիպոդերմատոզ - տավար - բոռ - թրթուր

С целью профилактики гиподерматоза крупного рогатого скота в начале лёта оводов к основанию хвоста животных прикрепляли кусочек дубленой кожи размером 18 x 1,8 см, пропитанный 60%-ной эмульсией неоцидола, оставляя его до конца лёта насекомых, что предотвращает яйцекладку у половозрелых самок оводов и развитие гиподерматоза у телят. Изменений количества эритроцитов и содержания гемоглобина в крови животных при обработке не наблюдается.

Гиподерматоз – крупный рогатый скот – овод – личинка

The pieces of leather 18 x 1.8 cm barked and soaked by the 60% emulsion of neocidole, have been sewed to the basic part of the tail since the start of gadfly flight till its finish to prevent the cattle hypodermatosis. It prevents the oviposition of mature female gadflies and appearance of hypodermatosis in calves. There were not any changes in red blood cells and hemoglobin quantity in treated animals.

Hypodermatosis – cattle - gadfly - larva

Տավարաբուծությունը հանդիսանում է Հայաստանի անասնապահության գլխավոր և զարգացող ճյուղերից մեկը:

Տավարաբուծության զարգացմանը խոչընդոտում են ինվազիոն հիվանդությունները, հատկապես ենթամաշկային բոռի թրթուրների կողմից հարուցվող հիպոդերմատոզ հիվանդությունը:

Հիպոդերմատոզը խրոնիկական հիվանդություն է, որը արտահայտվում է հարուցիչի թրթուրների տեղակայման վայրում առաջացող բորբոքային երևույթներով, օրգանիզմի ընդհանուր թունավորման և մթերատվության անկման նշաններով: Հայտնի է, որ հիպոդերմատոզով հիվանդ կովերի մոտ կաթի կորուստը տարեկան կազմում է 90-200 կգ, մսինը՝ 13-18 կգ, իսկ կաշեհումքինը՝ 8 % [1, 2]:

Հիվանդությունը հարուցվում է բոռի երկու տեսակների՝ *Hypoderma bovis* (սովորական բոռ) և *H. lineatum* (կերակրափողային բոռ) թրթուրների կողմից: Մաշկային բոռի այս երկու տեսակների կյանքի տևողությունը

ընդամենը մեկ օրացույցային տարի է, որից 10 ամիսը նրանք անց են կացնում տավարի օրգանիզմում, իսկ մնացած երկու ամիսը արտաքին միջավայրում, որից հետո ոչնչանում են:

Մաշկային բոռի դեմ պայքարի պրոբլեմը շատ վաղուց է գրավել մասնագետների ուշադրությունը: Դեռևս հնագույն ժամանակներից բոռի դեմ պայքարի համար օգտագործել են տարաբնույթ միջատասպան նյութեր պարունակող օծանելիքներ, լինիմենտներ, քսուքներ, փոշիներ, զազեր, էմուլսիաներ և այլն: Միայն վերջին տասնամյակներում առաջարկվել են բազմաթիվ բուսական, քլորօրգանական և ֆոսֆօրգանական պատրաստուկներ, սակայն դրանցից ոչ մեկը օժտված չէ բացարձակ միջատասպան հատկությամբ [3-5]:

Աշխատանքի նպատակն էր մշակել և փորձարկել տավարի հիպոդերմատոզի կանխարգելման նոր եղանակ և ուսումնասիրել այդ եղանակով կենդանիների օրգանիզմ ներմուծվող նյութերի ազդեցությունը նրանց արյան ձևաբանական կազմի վրա:

Նյութ և մեթոդ: Հետազոտությունները կատարվել են 2005-2006 թթ. Արագածոտնի մարզի Ավան գյուղի ֆերմերային տնտեսություններում: Այս և տարածաշրջանի այլ տնտեսություններում տավարի հիպոդերմատոզը յուրաքանչյուր տարի զգալի վնաս է պատճառում ֆերմերներին: Հետևաբար, հիպոդերմատոզը կանխարգելման նպատակով մենք փորձեցինք միջատասպան նյութերով մշակված կաշվե կտորները ամրացնել ոչ թե կենդանիների պարանոցին, ինչպես դա արվում է շների և կատուների մոտ, այլ պոչի հիմքին, քանի որ ենթամաշկային բոռը իր ձվերն ամրացնում է տավարի պոչի հատվածի և ազդրերի հետին մակերեսի մազերին:

Որպես միջատասպան նյութ ընտրվել է մեծ քանակներով ներկրվող և բարձր միջատասպան արդյունավետությամբ օժտված նեոցիդոլ պատրաստուկը: Կենդանիներին մշակելուց առաջ հաշվի է առնվել, թե այդ տարածաշրջանում, կախված կլիմայական պայմաններից, երբ է սկսվում և ավարտվում բոռերի թռիչքը:

Հիպոդերմատոզի կանխարգելման նպատակով փորձերը կատարվել են նույն տարում ծնված հորթերի վրա, որոնք նախօրոք բաժանվել են 4 խմբի, յուրաքանչյուրում 6 կենդանի: Կատարել ենք կենդանիների արյան ձևաբանական կազմի հետազոտություն: Հաշվել ենք արյան էրիթրոցիտների և հեմոգլոբինի քանակությունը մինչև կենդանիներին մշակելը և մշակելուց 7 օր, 20 օր և 7 ամիս անց:

Առաջին խմբի կենդանիները մշակվել են հետևյալ կարգով. հուլիսի սկզբին (բոռերի թռիչքի սկզբին) նույն տարում ծնված հորթերի պոչի հիմքին ռետինի օգնությամբ ամրացվել են 18 x 1,8 սմ չափի նեոցիդոլի 60% լուծույթի լուծույթով ներծծված կտորներ և թողնվել մինչև հոկտեմբերի վերջը, այսինքն տվյալ տարածաշրջանին բնորոշ, բոռերի թռիչքի ավարտը (կտորները փոխվել են յուրաքանչյուր 15 օր): Երկրորդ խմբի կենդանիներին արոտային շրջանի սկզբին և ողջ արոտային շրջանում 25 օրը մեկ կատարվել է ցողարկում քլորֆոսի 1%-անոց ջրային լուծույթով, յուրաքանչյուր գլխի համար ծախսելով 16 մլ լուծույթ: Երրորդ խմբի կենդանիներին նույն կերպ 25 օրը մեկ կատարվել է ցողարկում նեոցիդոլի 60%-անոց ջրային լուծույթով, յուրաքանչյուր գլխի համար ծախսելով 16 մլ լուծույթ: Չորրորդ (ստուգիչ) խմբում ընդգրկված էին նույնպես նույն հասակին պատկանող կենդանիներ, սակայն դրանք միջատասպան ոչ մի պատրաստուկներով չեն մշակվել:

Արդյունքներ և քննարկում: Չորս խմբերի կենդանիների արյան ձևաբանական կազմի՝ էրիթրոցիտների և հեմոգլոբինի փոփոխությունները բերված է աղյուսակ 1-ում:

Ինչպես երևում է աղյուսակի թվային պատկերից կենդանիներին նեոցիդոլով մշակելուց 7 օր անց նկատվում է էրիթրոցիտների քանակի ավելացում 25, իսկ հեմոգլոբինի քանակը՝ 24 %-ով, որը վերականգնվում է 20 օր անց, իսկ 7 ամիս անց կրկին տեղի են ունենում փոփոխություններ: Էրիթրոցիտների քանակը նորմայից ավելանում է 12 %-ով, իսկ հեմոգլոբինին՝ 9 %-ով:

Նույնանման պատկեր է ստացվում նաև քլորֆոսի 1 % լուծույթով մշակման ժամանակ՝ 7 օր անց էրիթրոցիտների քանակը ավելանում է 21,3 %, իսկ հեմոգլոբինի քանակը ավելանում է 15,7%: 20 օր անց այն վերականգնվում է, իսկ 7 ամիս անց՝ էրիթրոցիտներ ավելանում են 22 %, իսկ հեմոգլոբինը՝ 6,5 %:

Ինչպես երևում է աղյուսակից, այլ պատկեր է նեոցիդոլով մշակված ժապավենը ամրացնելիս: Կենդանիների մոտ արյան ձևաբանական կազմի ոչ մի փոփոխություն չի նկատվել:

Աղյուսակ 1. Հայտնի և առաջարկվող եղանակներով մշակված հորթերի արյան ձևաբանական կազմի հետազոտությունը
M(m, n = 6

Փոր- ձարկված դեղա- նյութեր	Մինչև փորձը		7 օր անց		20 օր անց		7 ամիս անց	
	Էրիթրո- ցիտ 10 ¹² /լ	հեմո- գլոբին գ/լ	Էրիթրո- ցիտ 10 ¹² /լ	հեմո- գլոբին գ/լ	Էրիթրո- ցիտ 10 ¹² /լ	հեմո- գլոբին գ/լ	Էրիթրո- ցիտ 10 ¹² /լ	հեմո- գլոբին գ/լ
Նեոցի- դոլի 0,05%- անոց լուծույթ	7,25(0,08	108(1,1	9,06(0,11	134(1,2	7,86(0,06	117(1, 0	6,35(0,19	98(0,8
Նեոցի- դոլով մշակված ծալալեն	7,26(0,096	107,6(1,3	7,28(0,08	108(1,6	7,41(0,11	109,1(1,4	7,4(0,16	108,3(0,9
Քլորո- ֆոսի 1%-անոց լուծույթ	7,5(0,06	107(1,1	9,1(0,06	129(0,8	7,63(0,08	108,3(0,96	5,85(0,12	100(1,6
Ստուգիչ խումբ	7,41(0,16	10,5(2,2	7,38(0,12	109,8(1,7	7,4(0,096	110,8(2,4	5,36(0,19	95,6(0,9

Չորրորդ խմբի կենդանիների արյան կազմի փոփոխություն նկատվել է 7 ամիս անց: Էրիթրոցիտների քանակը ավելացել է 25 %-ով, իսկ հեմոգլոբինինը՝ 13 %:

Բացի այդ հաջորդ տարի զարնանը կենդանիներին ստուգելիս, երկրորդ խմբի կենդանիների մաշկի վրա հիպոդերմատոզի հարուցիչի երրորդ աստիճանի թրթուրների խլվակներ չեն հայտնաբերվել: Առաջին խմբի կենդանիների մոտ խլվակների քանակը համեմատած ստուգիչ խմբի կենդանիների՝ կազմում էր 45,4 %, իսկ երրորդինը՝ 33 %:

Այսպիսով նեոցիդոլի 60 % յուղային լուծույթի մեջ պահված կաշվե կտորների օգտագործումը, ի տարբերություն անասնաբուժության մեջ ավան-դաբար օգտագործվող պատրաստուկների՝ նեոցիդոլի և մշակման ձևերի՝ ցողարկում կամ լողացում, արդյունավետ է, չի ազդում էրիթրոցիտների և հեմոգլոբինի քանակական կազմի վրա, քիչ աշխատատար է և, որ ամենակարևորն է, առաջարկվող եղանակը հնարավորություն է տալիս տնտեսությունները մի քանի տարիների ընթացքում լիովին ազատել հիպոդերմատոզի հարուցիչներից:

Անհրաժեշտ է ընդգծել, որ բացի բոռերին վանելու հատկությունից, մեր կողմից փորձարկված եղանակով կենդանիներին մշակելու դեպքում դրանց վրա չեն հայտնաբերվել անասնաբուժության համար չարիք հանդիսացող արոտավայրային տզերը:

Առաջարկվող եղանակի համար ստացվել է արտոնագիր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հ.Զ. Նաղաշյան. Մակաբուժաբանություն և կենդանիների ինվազիոն հիվանդություններ. Երևան, ՍՍՀՄՎԱՐԴ հրատարակչություն, 2003:
2. Непоклонов А. Животноводство России, 6, 5, стр. 78-81, 2000.
3. Окунев А.М. Сб.науч.тр. ВНИИВЭА. 36, стр.89-92, 1994/1995.
4. Oksanen A, Nieminen M. Acta Vet Scand. 4, 39, 483-9, 1998.
5. Riha J, Minar J, Matouskova O. Vet Med (Praha). Apr;22, 4, 193-200, 1977.

Ստացվել է 16.02.2009